139 Քրիստոս թագավոր է սիրո, զորության,

1. Քրիստոս թագավոր է սիրո, զորության,
Ճշմարտության շնորհքով օժտված հավիտյան,
Լի գութով պատրաստ է օգնելու հոժար,
Ուխտել էր Իր Հորը՝ փրկել մարդկության:
Մորթված Գառնուկը հաղթեց աշխարհին (3),
Աստծո Քրիստոսը՝ մեղքին ու մահին:

2. Սատանան սոսկում է, սարսափած փախչում,
Դևերը շփոթված՝ ահից զարհուրում,
Անհավատությունից դժոխքն է լցված,
Դատաստանի ահից տագնապի մատնված:
Ալելուիա՛, հաղթե՛ց Քրիստոսը մահին (3),
Ալելուիա՛, հաղթեց ցուրտ գերեզմանին:

3. Քնած մեղավորներ, ի՞նչ եք մտածում,
Տեսեք, թե աշխարհը ո՞ւր է ձեզ տանում,
Անհոգությունից էլ շատերը կորան
Եվ ունայն աշխարհից ոչինչ չտարան:
Ապաշխարե՛ք շուտով, շնորհք ստացեք, (3)
Ապաշխարե՛ք իսկույն, Տիրոջ մոտեցեք:

3. Մեր Տերը գալու է շուտով ամպերով,
Լուսո հրեշտակներով, սրբոց բանակով,
Աշխարհը կլցնի արդարությունով,
Կդատի ազգերը՝ ճշմարտությունով:
Ալելուիա՛, հաղթե՛ց Քրիստոսը մահին, (3)
Ալելուիա՛, հաղթեց ցուրտ գերեզմանին: